

նրին հեղահողին, խոնարհամիտ Մարիամին»:

Այսպէս, ուրեմն, որեւէ տարակույտ վեր կրնանք ընդունել, թէ Խօճայ Սաֆարին եւ Խօջայ Նազարին ծնողքը կը կոչուէին Խօջայ կամ Աղա Խաչիկ եւ Մարիամ կամ Մամին, որ, ըստ երեւոյթին, ազաւարումն է Մարիամին:

Հին Ջուղայեցի այս Խօջայ Խաչիկին մասին է, որ Առաքել Դաւրիթեցի կը գրէր, երբ կը նկարագրէր Շահ Ապպաս մեծի մուտքն եւ ընդունելութիւնը ի Հին Ջուղայ 1603-ին:


«Եւ զճանապարհս անցից արքայի զարդարեցին. եւ յեզերէ դետոյն մինչեւ ցաղարանս Խօջայ Խաչիկին արկին փայանդաղ առաթուր թագաւորին, պատուական եւ վայելուչ կու՛մաշս, որոց վերայ էանց թագաւորն՝ եւ դնաց ի տուն Խօջայ Խաչիկին: Եւ ի տան անդր, Խօ-

Ջուղայու մատուցին ընծայ, որպէս վայել է թագաւորի: Եւ զաւուրս երեք եկաց անդ շահն, եւ Ջուղայեցիք պատուեցին զնա համազամ կերակրօք եւ ծաղկեհամ գինեաւ»: 2)

Յաւալի է, որ Խօջայ Խաչիկի մասին մեր գիտցածը այսքանով ալ կը բննայ: Հ. Ալիշան իր պատուական «Սիւսկան»ին մէջ Խօջայ Խաչիկի կենսագրութեան համար խոշոր նըպաստ մը կը բերէ՝ Հին Ջուղայի քանի մը տապանագրութեանց կարգին տալով նաեւ հետեւեալը.

«Սուրբ Խաչս բարեխաւս առ Քրիստոս մեծ եւ անուանի քաղաքապետ Խաւջայ Խաչիկին եւ կողակից Մարիամին»: 3)

Ուրեմն, Խօջայ Խաչիկի մահը տեղի ունեցած է Հին Ջուղայի մէջ ՌԾԳ.ին, որ է մեր 1604-ին: Իր կինը, ըստ երեւոյթին, ողջ էր



ՄԱՆՈՒԿ ԵՍՁԱՐԻ ՏԱՊԱՆԱՔԱՐԸ

ջայ Խաչիկին ոսկի սկուտեղ լցեալ ոսկւով եղեալ ի ձեռն որդւոյ իւրոյ մատոյց առաջի թագաւորին, նոյնպէս եւ ամենայն մեծամեծքն

\*) Բրիտանական թանգարանի թիւ 8 ձեռագրին վերջին ստացողներէն Խօջայ Նազարի մէկ յիշատակարանին համաձայն, Խօջայ Նազարի հայրը կը յիշուի Խօջայ Խաչիկ, մայրը՝ Մարիամ, եղբարք՝ Սաֆար եւ Սինան: Յիշատակարանին մասին իր կարգին:

զեռ այն տուն:

Խօջայ Խաչիկի դամբարանին մասին Հ. Ալիշան կ'աւելցնէ թէ՛ «Գտանին եւ մատրանաձև շիրիմք, որպիսի է Խօջայ Խաչիկի, որ թուր որդի Մանուկ Նազարի»:

Հ. Ալիշան մեզ աւելի երախտապարտ կը

2) Պատմութիւն Առաքել Վարդապետի:— 1896, Վաղարշապատ, էջ 25:

3) Սիւսկան:— 1893, Վենետիկ, էջ 424: